## ԴՈՒԽԱԲՈՐՆԵՐԻ ԳԻՒՂԵՐ

Գանձակի գաւառում կան դուխաբորների հետեւեալ գիւղերը.

1) Սլավեանկա, 2) Նովօ-Գորելոյէ, (Որթափա) 3) Նովօ-Սպասկոյէ, 4) Նովօ-Տրօիցկոյէ (Գիւնալ):

Այս չորս գիւղը ի միասին կազմում են մի, Սլավեանկայի, հասարակութիւն և ունին 339 տուն, 1220 ար. 1226 իգ. ի միասին՝ 2446 հոգի:

Սրանցից Սլավեանկա գիւղը գտնւում է Գետաբէկի պղնձահանքից 8 վերստ դէպի հիւսիս, Գանձակից մօտ 70 վերստ դէպի արեւմուտք, մի. դաշտավայրի վրայ, Արեշէնկա գետակի ափերին, որ սկիզբն է առնում Ղըզըլ-չակ լեռից և թափւում Ջակիր-չայի մէջ: Աւանդութեան ասելով հնումը սա հայաբնակ է եղել և կրել է Վարդանապատ անունը: Թուրքերը սրան կոչում են Ենկիջա-Բազար: 1837—38 թուերին Թաղէթից 40 տուն հայեր գաղթել են այստեղ, սակայն Թուրքերից սաստիկ նեղուելով 1844 Թ. վերադարձել են իրենց գիւղը: Սրանց շինած եկեղեցին այժմ էլ կայ գիւղի հիւսիսային կողմում: Սլավեանկան, ինչպէս և միւս բոլոր դուխաբորների գիւղերը, ունին կանոնաւոր, երկար և լայն փողոցներ: Բնակարանների առաջ կան պարտէզներ, պտղատու ծառերով, որոնք գիւղին բաւական գեղեցիկ տեսք են տալիս:

Գիւղում կայ պետական երկդասեան տղայոց դպրոց, հիմնուած 1888 թուին:

Ամառները այստեղ են մնում գաւառիս չորրորդ ոստիկանական բաժնի ոստիկանը, հաշտարար դատաւորը և քննիչը: Բնակիչները 211 տուն են, 774 ար. 763 իգ. իմիասին 1537 հոգի:

Նովօ-Գորելոյէն գտնւում է Սլավեանկայից մօտ 3. վերստ դէպի արեւելք. հնումը հայաբնակ է եղել Ելքնեցի անունով,

լեռոյ Թուրքաց ամառանոց՝ Աչխոֆ կոչումով։ Բնակիչները 61 տուն են, 236 ար. 238 իգ. ի միասին՝ 474 հոգի։

Նովո-Սպասկոյէն գտնւում է Սլավեանկայից 5—6 վերստ դէպի արեւելահարաւ. հնումը նոյնպէս հայաբնակ է եղած Խնուս անումը։ Բնակիչները 31 տուն են, 108 ար. 114 իգ. ի միասին՝ 222 հոգի։

Նովո-Տրոիցկոէն ընկնում է Նովո-Գարեւլոյի մօտ, 2 վերստ դէպի արեւելահիւսիս։ Բնակիչները 36 տուն են. 102 ար. 111 իգ. ի միասին 213 հոգի։

Այս չորս գիւղերի մէջ էլ ոչ մի առանձին նշանակութիւն ունեցող բան չկայ։